

ուած բազմութիւնը խոնուած էր Անհատաւ Հայ-
րապետի բնակարանի առաջ և անվերջ «կեցցէ»նե-
րով օղն էր թնդացնում: Դորին Օծութիւնը զգած-
ուած սիրոյ այդ բուռն արտայայտութիւնից՝ դուրս
եկաւ և օրհնեց հոգեզմայլութեամբ Իրեն նայող
ժողովրդին:

Իժարագարար այս ընդհանուր ուրախութիւնը
շուտով փոխուեցաւ սուգի բարեկիշատակ Կիւրեղ
սրբազան եպիսկոպոսի մահուամբ: որ ի խորին վիշտ
համակից թէ Դորին Օծութեան և թէ բոլոր բա-
րեմիտ ազգայնոց սրտերը:

Անհատաւ Հայրապետը գեղեցիկ կերպով ցոյց
տուաւ Հայաստանեայց եկեղեցու այդ կորստի մե-
ծութիւնը իւր դամբանականի մէջ, որ Դորին Սըր-
բութիւնը խօսեց Ս. Լուսաւորիչ եկեղեցում ի յի-
շատակ հանգուցելոյ կատարած հանգիսաւոր հոգե-
հանգստեան ժամանակ:



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Մարտի 12-ին, կի բակէ օրը, զկնի ս.
պատարագի Մայր Տաճարումս հանդիսաւոր
հոգեհանգիստ կատարուեցաւ ի Տէր հան-
գուցեալ Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանի հա-
մար: Բարեշնորհ կարապետ վարդապետը
Մայր Աթոռի բոլոր միաբանութեան և բազ-
մութիւ ժողովրդեան ներկայութեամբ խօսեց
մի սրտառուց դամբանական, որ և յառաջ
ենք բերում այստեղ:

«Օրէնք հոգւոյն կենաց եւ քրիստոս Յիսուս
ազատեցին զիս յօրինաց մեղացն եւ մահու:»

Հոռով. Ը. 2:

«Մայր Աթոռի Միաբանութիւնը ողբում
է այսօր իւր անդամներից մէկի վախճանը,
որ կենաց միջոցին արգարացրել է ս. Գրքի
այս խօսքը այնպէս, ինչպէս գուցէ ոչ մէկը
մեզանից անշուշտ նորա մահուան նկատ-
մամբ ևս արգարանումէ նոյն խօսքը և ի-
րաւունք տալիս մեզ այդպիսի վկայութիւն
դնել այստեղ: Յաւ է մեզ, որովհետեւ նորա
վախճանը աստէն ի մարմնի կարեւոր ևս
էր վասն մեր: Բայց այդ ցաւը հեծութեամբ
և արտասուօք չենք արտայայտի մենք. Կիւ-

րեղ Սրբազան այն հաղ-ւազի տ մարդիկնե-
րից էր, որ գիտէր սառն սրիւնով նայել
աշխարհիս ամեն մի պատահարի վերայ, զար-
մանալի համբերութեամբ և տոկունութեամբ
տանել անակրնկալ փորձանքները, յաղթել
չարեացն ու վշտին միանգամայն, և նորա
խրոխտ հոգուն հաճելի չէ անշուշտ, որ մենք
զգացական զեպւմներով պղտորենք այժմ
բոլորէի վսեմութիւնը: Այստեղ շուրջ չեն
կանգնած նորա հարազատ ազգականներն ու
մտերիմները, որ նորա երկրաւոր կեանքի
մանր մունր զէպքերն յիշելով սրտեր շար-
ժէինք. հանգուցեալը այնպէս մեծ ու
փոքրից սիրուած մէկը չէր, որ անունը
տալուն պէս հարիւրաւոր աչքերից արտա-
սուք կաթէր. նա աշխատել է միշտ Աստու-
ծուն հաճոյ լինել և ոչ մարդոց, ամբոխի
ինքնասիրութիւնը շոյելու համար քաղցր լե-
զու չէ գործածել: Արգարեւ հաղիւ թէ մէ-
կը կգտնուի այստեղ կանգնածներից, որ
նորան որեւէ բանով պարտական չլինէր:
Կիւրեղ Սրբազանն այնպիսի մարդ չէր, որ մի
տեղով անցնէր ու ամենքը նորան չնկատէին,
նորա հայեացքի, նորա խօսքի ազդեցու-
թիւնը երկար ժամանակ իրենց վրայ չկրէին.
Այստեղ կանգնած ենք նորա աշակերտներս,
շատելը նորա մօտիկ բարեկամներից, բայց
մենք «թէպէտ և գիտէաք զնա մարմնով,
այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք», մեզ հա-
մար կարեւորութիւն չունին այլ ևս նորա
մարմնաւոր առաքինութիւնները: Եւ նա
մարմնաւոր շատ մեծ արժանիքներ էլ չու-
նէր. տիրացուններից ուսում առած, տիրա-
ցումի գիւղի մէջ համալսարան նա չէր տեսել,
թէ և իւր բնածին հանճարով գիտէր նոյն
իսկ գիտութեան վերայ բռնանալ և կար-
կեցնել յաճախ մեզ պէս տառնեակ համալ-
սարանականների: Մեծածախք շէնքեր, հի-
ւանդանոց, անկեղանոցներ նա չէ կառուցել,
թէ և ամբողջ կեանքում հաւատարիմ է զբո-
նուել Տիրոջ այն պատուէրին, թէ «երանելի է
մանաւանդ տալն քան առնուն», և իւր մի
ձեռքով առածը իսկոյն միւս ձեռքն է պա-
հել, որպէս զի այնտեղից էլ առաջին պա-
տահած մուրացկանի ավն անցնի՝ մուրաց-
կաններ ամեն կարգի, որանցից շատերը գու-
ցէ այսօր նորան այլ ևս չեն յիշում կամ
քարեր են նետում նորա թարմ գերեզմա-
նի վերայ: Ոչ մի դպրոց այսօր նորա անու-
նը չէ կրում, թէ և նա աշխատել է, շատ է
աշխատել զպրոցի համար, ուսուցիչ է եղել, որ-
պէս աւաղ քչերն են մեզ հետ ոչ միայն ման-
կանց մտքերը, այլ և սրտերը կրթել ջանալով:

դնելով այնտեղ բարոյական զգացման մի սերմ, որ մեռնել չէ կարող, վաթսուներորդ հարիւրամարդ պոռուղ պիտի բերէ, եթէ չափազանց շատ չեն շուրջ պատուղ փշերն ու տատակները: Մեծ գործեր առհասարակ նա չէ կատարել. մի քանի տասնեակ տարիների ընթացքում անցել է նա միայն մեր այս մարդկանց անապատ աշխարհի մի ծայրից միւսը՝ իւր անձն իրրեւ կենդանի օրի նսկ ընծայելով, վկայութիւն գնելով ամենքի առաջ, թէ նախնեաց առաքինութիւնների մասին պատմածներն առասպելներ չեն, թէ հայութիւնը բարոյապէս իսպառ չէ մեռած, որովհետեւ այգպիսի առաքելներն այսօր էլ կարող է արտագրել:

Այո՛, կիւրեղ Սրբազանի մահով աշխարհից հեռանում է մի հազուագիւտ հայ, մի իսկական հայ, մի տղամարդ, որ խօսքի ճշմարիտն ասել գիտէր, մի քրիստոնեայ, որի համար իւր հաւատն ու իւր բարոյական պարտքերը հնչուն բռներ չէին միայն. մի հոգեւորական, որի մասին ոչ ոք չի համարձակի ասել, թէ նա ձեւի համար էր սեղգեստ հագնում:

Եւ այժմ երբ անմահ հոգին, թօթափելով իւր վերայից մարմնաւորն ու անցողականը գալիս պատկերանում է մեր աչքին իւր տեւական անանցանքի գծերով ու է որ երկիւղածութեամբ գլուխ չի խոնարհի այդ պատկառելի պատկերի առաջ, եթէ միայն նորա մէջ չէ մեռել բարոյական ըզգացման վերջին թռթիւրը, եւ ինչքան խորհրդաւոր է այդ պատկերը, ինչքան բազմախրատ ամենքիս համար: Մեզ հոգեւորականներիս ասում է նա. «պարտապան էք ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ, զի եթէ ըստ մարմնոյ կեցէք մեռանելոց էք» — կը մեռնիք, եթէ հոգեւոր կեանքի համար ոչինչ չէք վատակել, եթէ տեւական ապրելու ընդունակ ոչինչ ձեռք չէք բերել. կմեռնիք, եթէ նոյն իսկ ձեր փառքը աշխարհից աշխարհ պատմուի, բերնէ բերան անցնի, մի քանի սերունդ մնայ. «իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք կեցջիք»: Մասնաւորապէս նորա աշակերտներին յորդորում է անլինջ դրոշմել այդ պատկերը իրենց յիշողութեան մէջ, ազերսել որ նորա հոգին իրենց վերայ ինչէ, պարտաճանաչ զգացումներ, առաքինի գործեր ներշնչէ: Եւ վերջապէս մխիթարում ու խրատ է կարգում քեզ, Հայոց Ժողովուրդ, մի վշատիւր, եթէ քո հարազատ բարեկամների, քո հաւատարիմ աշխատաւորների թիւը պակասում է. սովորիր

միայն արդար վաստակը գնահատել, աղնիւն ու առաքինին զանազանել ու բարձր դասել կեզծ ու պատիր շողոքորթութիւններից, քեզ համար անկեղծութեամբ ցառլի դառն խօսքը քայքայ համարիր՝ այն ժամանակ անպակաս կլինին քո միջից կիւրեղ եպիսկոպոսներ, անպակաս իրենց անուանը արժանի հոգեւորականներ: Իսկ երջանիկ հանգուցեալը ոչ մի կարօտ չունի այլ ևս այս աշխարհից. մենք միայն զեղտն զգացմամբ և լիբուռն բերանով նորա մարմնը յիշատակն օրհնել կարող ենք. օրհնես է արդարի յիշատակը, օրհնես, ամէն:



ՊԼԵՏՈՆԿԱՆԲ.

ՔԱՂՈՒԱԾԻՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ,
ԿՈՆԴԱԿՆԵՐԻՅ.

Կոնդակ յանուն Կոնստանտինային Ատորախանայ հմրւ. 2187, որով հրամայէ վաւերական համարել զպատկն Գէորգայ Մակարեան Ուլուխանեանց:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Յովհաննէս աւագ քահանայի Տէր Գալստեան և եղբօրն նորին Գալստի Տ. Գալստեան, սակս կառուցման Եկեղեցւոյ յԱխալքալուք գեղջ Գօրւոյ:

Կոնդակ յանուն պ. պ. Առաքելի Առաքիւնի, Սարգսի Իզրաշեան Ալեքսանդրի Տ. Յովհաննիսեան, Գնդ. Յովհաննիսի Քալանթարեան, Զաւատ բէգի Իշխանեան և Յակօբջան բէգի Խաչատրեան հմրւ. 4, որով կարգին առ ժամանակեայ կառավարիչ տնտեսական մասին թեմ. հոգեւոր Կարանոցի Արցախու:

Կոնդակ յանուն Սինօղի Ա. Էջմիածնի հմրւ. 19 որով հրամայի առաքել առ Վեհ. Հայրապետ զամենայն օրագիրս կաղմեալս ի Սինօղի: